Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2017թ.
օգոստոսի 17 թիվ 7 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան
«17» օգոստոս 2017թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Ի.Ընդհանուր դրույթներ

1. Գավառի պետական համալսարանում (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականությունը բխում է ԳՊՀ առաքելությունից և կազմում է Համալսարանի ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասը:

2. Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականության հիմունքները, Համալսարանի կանոնադրությանը և զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան, սահմանում են ԳՊՀ-ում գիտահետազոտական գործունեության իրականացման նպատակներն ու խնդիրները, գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող աշխատակիցների գործունեության, Համալսարանի ամբիոնների գիտահետազոտական գործունեության կառավարման, գիտական և կրթական գործընթացների փոխկապակցման հիմնական սկզբունքները:

3. Համալսարանի գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող աշխատակիցների՝ պրոֆեսորադասախոսական կազմի, հետազոտողների, ուսանողների, ասպիրանտների (այսուհետ՝ ԳՀ կազմ) գործունեությունը կարգավորվում է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտը կարգավորող օրենքներով, Համալսարանի կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով:

II.Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականության հիմնական նպատակները

4. Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականության հիմնական նպատակներն են՝

1) գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ գործընթացի կազմակերպում,

2) կրթական գործընթացի և գիտության զարգացման արդյունքների ինտեգրման ապահովում,

3) Հայաստանի Հանրապետության, մասնավորապես Գեղարքունիքի մարզի գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացմանը նպաստում,

4) գիտահետազոտական ծրագրերի իրականացմանը և դրանց արդյունքների ներդրմանը նպաստում՝ ուղղված հայագիտության զարգացմանը, Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը, հոգևոր-մշակույթային կյանքի ակտիվացմանը,

5) Հայաստանի Հանրապետության և միջազգային գիտահետազոտական գործընթացներին Համալսարանի ԳՀ կազմի ինտեգրմանը նպաստում:

III. Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականության հիմնական սկզբունքները

5. Համալսարանում գիտահետազոտական գործունեության իրականացման և խրախուսման քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

1)Համալսարանում ԳՀ կազմի գիտահետազոտական գործունեության փոխկապակցում ՀՀ Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունների հետ,

2)ԳՀ կազմի գիտահետազոտական, նորարարական գործունեությանն աջակցություն,

3) ԳՀ կազմի ստեղծագործական ազատություն,

4) ԳՀ կազմի մտավոր սեփականության իրավական պաշտպանվածություն,

5)գիտահետազոտական գործունեության ուղղությամբ Համալսարանի միջազգային համագործակցության զարգացում:

IV. Համալսարանի ԳՀ կազմի իրավունքները

6. ԳՀ կազմի անդամները՝ դասախոսները և սովորողներն իրավունք ունեն.

1) իրենց գիտական հետաքրքրություններին և ստեղծագործական ունակություններին, ինչպես նաև համամարդկային ու ազգային արժեքներին համապատասխան ընտրել գիտահետազոտական գործունեության ձևեր, ուղղություններ և միջոցներ,

2) գիտահետազոտական գործունեություն ծավալելու նպատակով միավորվել այլ գիտնականների, գիտական աշխատողների հետ և կազմակերպել մշտական կամ ժամանակավոր գիտական խմբեր,

3) պատճառաբանված կերպով հրաժարվել այն գիտահետազոտական ծրագրերին մասնակցելուց, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ մարդու, հասարակության կամ շրջակա միջավայրի վրա,

4) իրենց որակավորմանը, ստացած գիտական արդյունքներին, կատարած աշխատանքի որակին և բարդության աստիճանին համապատասխան ստանալ բարոյական և նյութական խրախուսում, ինչպես նաև վարձատրվել կամ եկամուտ ստանալ իրենց գիտական կամ գիտատեխնիկական գործունեության արդյունքի իրացումից,

5) մասնակցել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորվող գիտական հետազոտությունների համար հայտարարված մրցույթներին,
6) հրապարակել սեփական հետազոտությունների արդյունքները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
7) մասնակցել Համալսարանում ԳՀ կազմի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթներին,
8) գիտության զարգացման, տեխնոլոգիաների, գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների, արտադրության մեջ դրանց ներդրման ու գիտական կադրերի պատրաստման համար սահմանված կարգով արժանանալ գիտական աստիճանների, գիտական կոչումների, մրցանակների, տիտղոսների, պատվավոր կոչումների,
9) ազատորեն օգտագործել, տարածել և փոխանակել գիտական տեղեկատվություն, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պետական, ծառայողական, առևտրային և այլ գաղտնիք համարվող տեղեկատվությունը,
10) զբաղվել մանկավարժական գործունեությամբ, իրականացնել խորհրդատվություն, լինել փորձագետ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Համալսարանում իրականացնել մենթորական գործունեություն,
11) գիտահետազոտական գործունեության արդյունքները ներկայացնել գիտական զեկուցումների, հրապարակումների ու ատենախոսությունների պաշտպանության եղանակով, դրանք անվճար տպագրել ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուներում:

V. **Համալսարանի ԳՀ կազմի պարտականությունները**

7. ԳՀ կազմի աշխատակիցը կամ սովորողը պարտավոր է՝
1) գիտական կամ գիտատեխնիկական գործունեությամբ չվնասել մարդկանց կյանքին, առողջությանը և շրջակա միջավայրին, չխաթարել հասարակական հարաբերությունների բնականոն ընթացքը, պետության անվտանգությունը,
2) պահպանել գիտական բարեվարքության և ակադեմիական ազնվության կանոնները,
3) հարգել այլոց մտավոր սեփականության իրավունքը,
4) շարունակաբար բարելավել իր մասնագիտական որակները:

VI. **Համալսարանի գիտահետազոտական գործունեության կառավարումը**

8. Համալսարանում գիտահետազոտական գործունեության կառավարումն իրականացվում է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, ռեկտորի, գիտական խորհրդի կողմից:

9.Համալսարանում գիտահետազոտական գործունեությունը համակարգում է ուսումնագիտական գծով պրոռեկտորը՝ գիտական խորհրդին ներկայացնելով ամենամյա հաշվետվություններ:

10.Համալսարանի ամբիոններն իրենց մասնագիտական ուղղվածությանը համապատասխան որոշում են գիտական հետազոտությունների գերակա ուղղությունները և իրականացնում գիտահետազոտական ծրագրեր:

11.Համալսարանի ամբիոնների գիտահետազոտական գործունեությանն աջակցում են ԳՊՀ ակադեմիական քաղաքականության, որակի ապահովման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինները, մյուս կառուցվածքային ստորաբաժանումները՝ իրենց գործառույթներին համապատասխան: